«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«09» մարտի 2015թ.

Հաստատում եմ

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետի ժամանակավոր պաշտոնակատար

Հ. Թունյան

ԳԲԽ-03/15 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Ստանդարտ Օյլ» ՍՊԸ-ի 02.03.2015թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Ստանդարտ Օյլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

2015թ. մարտի 2-ին ներկայացված բողոքով «Ստանդարտ Օյլ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից վառելիքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/25» ծածկագրով ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ)

հայտերի բացումը պետք է տեղի ունենար 2015թ. մարտի 2-ին՝ ժամը 10:00-ին, www.armeps.am կայքի միջոցով:

Ընկերությունը հայտնել է նաև, որ ս.թ. փետրվարի 27-ին ժամը 16:00-ից մինչև մարտի 2-ը ժամը 10:00-ն փորձել է միանալ www.armeps.am կայքին՝ հայտը ներբեռնելու համար, սակայն կայքը անհասանելի է եղել:

«Ստանդարտ Օյլ» ՍՊԸ-ն խնդրել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/25» ծածկագրով ընթացակարգը համարել չկայացած, քանի որ խախտվել է Ընկերության մասնակցության իրավունքը՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ և 6-րդ հոդվածների:

Ի լրումն 02.03.2015թ. ներկայացրած բողոքի՝ Ընկերությունը 05.03.2015թ. դիմում է ներկայացրել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն) և խնդրել է «Ստանդարտ Օյլ» ՍՊԸ-ի 02.03.2015թ. բողոքը թողնել առանց քննության՝ պատճառաբանելով, որ վերացել է Ընկերության բողոքով ներկայացրած պահանջը:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 09.03.2015թ. ԴՎԱ/467 գրությամբ ներկայացրել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/25» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող փաստաթղթերի պատճենները:

Միաժամանակ վերոհիշյալ գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ Ընթացակարգի հրավերով և www.armeps.am համակարգով սահմանված հայտերի վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը բացվել են և գնահատվել են՝ ըստ կարգի:

3. ԳԲԽ-03/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Ստանդարտ Օյլ» ՍՊԸ-ի 02.03.2015թ. ներկայացրած

բողոքը, ՀՀ պաշտպանության նախարարության 09.03.2015թ. ԴՎԱ/467 գրությունը և կից փաստաթղթերը, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/25» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր), հայտնում է հետևյալը.

ԳԲԽ-03/15 բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից վառելիքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/25» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

2. Ընթացակարգի Հրավերով սահմանվել է, որ հայտերը կբացվեն 2015թ. մարտի 2-ին, ժամը 10:00-ին՝ www.armeps.am կայքի միջոցով, հետևաբար՝ մասնակիցները գնման առարկայի վերաբերյալ իրենց կազմակերպության հայտերը պետք է ներկայացնեն www.armeps.am կայքի միջոցով, ոչ ուշ, քան 2015թ. մարտի 2-ին՝ ժամը 10:00-ին:

3. Գնման գործընթացին մասնակցելու նպատակով Ընկերությունը ս.թ. փետրվարի 27-ին ժամը 16:00-ից մինչև մարտի 2-ը ժամը 10:00-ն փորձել է միանալ www.armeps.am կայքին՝ հայտը ներբեռնելու համար:

4. Կենտրոնի կողմից կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ էլեկտրոնային գնումների www.armeps.am համակարգի աշխատանքը խափանված է եղել ս.թ. փետրվարի 26-ին ժամը 16:00-ից մինչև փետրվարի 27-ը ժամը 12:16-ը և մարտի 2-ին մինչև ժամը 11:30-ը ներառյալ:

4. ԳԲԽ-03/15 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք՝

1) որոնք դատական կարգով ճանաչվել են սնանկ.

2) որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով.

3) որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է.

4) որոնք ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին որևէ անձի մասնակցությունը կարող է սահմանափակվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, եթե դա անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության ապահովման համար:

Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ արգելվում է միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների.

2) սույն օրենքի 27-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված մասնակցության դեպքերի՝ համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով):

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 146-րդ կետի համաձայն՝ բողոքարկման խորհուրդ բողոք ներկայացրած անձի կողմից բողոքի քննության ընթացքում բողոքը հետ վերցվելու դեպքում «Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը շարունակում է ուսումնասիրել և ներկայացնել եզրակացություն՝ բողոքի քննման համար նախատեսված ժամկետներում:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին, 6-րդ հոդվածի 1-ի, 2-րդ և 4-րդ մասերում ամրագրված իրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ գնման գործընթացին մասնակցնելու իրավունքի սահմանափակման փաստն առկա է լինում միայն այն դեպքում, երբ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերի, 6-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերի ուժով կամ Օրենքով չնախատեսված այլ հանգամանքներից ելնելով մասնակիցն օբյեկտիվորեն զրկված է լինում գնման գործընթացին մասնակցելու Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով վերապահված իրավունքն իրացնելու հնարավորությունից:

Մինչդեռ, «Ստանդարտ Օյլ» ՍՊԸ-ն գնմանը մասնակցելու իրավունքն իրացնելու պահին՝ ս.թ. փետրվարի 27-ին ժամը 16:00-ին, զրկված չի եղել այդ իրավունքն իրացնելու հնարավորությունից, քանի որ այդ պահին www.armeps.am համակարգի աշխատանքը խափանված չի եղել:

Նման պայմաններում, քանի որ գնման գործընթացին մասնակցելու իրավունքն իրացնելու պահին Ընկերության համար խոչընդոտներ առկա չեն եղել, ուստի առաջարկում ենք «Ստանդարտ Օյլ» ՍՊԸ-ի 02.03.2015թ. ներկայացրած բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝
Պետի տեղակալ՝ Հ.Այունց

Գնումների աջակցման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման
բաժնի վարիչ՝ Դ. Դավթյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ԳԲԽ-03/15 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ռ.Մկրտչյան